ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

14 դեկտեմբերի 2021թ. կնքված N ՀՌՀ-ԳՀԾՁԲ-21/25 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան « 17 » հունվարի 2022 թ.

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Խաչատրյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 14 դեկտեմբերի 2021 թ. կնքված N «ՀՌՀ-ԳՀԾՁԲ-21/25» գնման պայմանագրի՝ այսուհետ «Պայմանագիր» 4.1, 4.2, 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին.

1.1 Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

1.2 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման վճարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելված 1-ի (կցվում է):

1.3 Սահմանել, որ Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ մնում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ք. Երևան, Իսահակյան 28 ՀՀ ՖՆ գործառական վարչություն Հ/Հ 900011057016 ՀՎՀՀ 02556422 ---------- (ստորագրություն) Կ.Տ	«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ ք. Երևան, Տիգրան Մեծի 4 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1930046450680100 ՀՎՀՀ 02591995 ---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
թ. կնքված ՀՌՀ-ԳՀԾՁԲ-21/25 ծածկագրով
նպատակով

«14» դեկտեմբերի 2021
պայմանագրում փոփոխություններ կատարելու
« 17 » հունվարի 2022 թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79211180/501	Ներքին աուդիտի ծառայություններ	-	-	-	249250	249250	249250	498500	498500	498500	747750	747750	997000	997000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողով
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
Հ/Հ 900011057016
ՀՎՀՀ 02556422

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930046450680100
ՀՎՀՀ 02591995

(ստորագրություն)